



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Ապրիլ 26, 1990

Մեծայարգ
Տիար Տիրան Գրանեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Պիակհամթըն.

Յարգելի Տիար Գրանեան,

Ստացուած են համայնքիդ Ծխական Ժողովի տեղեկագիրները, որոնցմէ կը տեղեկացուի թէ Դեկտեմբեր 10-ին, 1989, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի չորս անդամները:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Նշան Բէշոյեան
Կարապետ Տաթալ
Լուք Սարգիսեան
Րուսի Գասիտի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դիմել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ընտրութեանց քուէարտութիւնն օրինակներ:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Torkom Manoogian

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ